ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

01 ՓԵՏՐՎԱՐԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 22 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Անդրեասյանը, Արամ Գասպարյանը, Կարինե Թովմասյանը, Էլմիրա Ոսկանյանը, Վարդուհի Սարգսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Վարդան Գաբրիելյան, Նվարդ Սահակյան, Արմինե Կոստանյան, Տիգրան Բաբախանյան, Հասմիկ Ավետիսյան, Զորիկ Գրիգորյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Համբարձումյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վարդան Գաբրիելյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 01-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի համաձայն **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 01-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 01-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՆԹԱՊ. ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԵՎ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԴՊՐՈՑ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

4. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 334-Ն ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ, 2-ՐԴ, 3-ՐԴ, 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾ 5-Ի ՀԱՄԱՁԱՅՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ՄՆԱՑՈՐԴԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՏԱՐԲԵՐ ՄՐՑԱՇԱՐԵՐՈՒՄ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏՍՄԵՆՆԵՐԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՍՏՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՎԱՐԴ ՍԱՀԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 11-րդ հոդվածով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով և հաշվի առնելով՝ համայնքի ղեկավարի առաջարկությունը **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում հատկացնել 20 000 000 (քսան միլիոն) դրամ գումար՝ 2024

թվականի ընթացքում համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց սկսելու նպատակով:

2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են համայնքի բոլոր ոլորտներն ու բնակավայրերը:

3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն համայնքի 16 տարին լրացած բնակիչները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ, արհեստակցական միություններ, մասնագիտական ասոցիացիաներ, մեդիա խմբեր, հիմնադրամներ և քաղաքացիների այլ խմբեր):

4. Համայնքի ղեկավարին՝
1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում, 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում.
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը (ները) ներկայացնել ավագանու հավանությանը.
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02-Ն/

Լսեցին
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՆԹԱՊ, ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԵՎ ՆՈՐ ԿՅՈՒՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԴՊՐՈՑ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՎԱՐԴ ՍԱՀԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Մասիս համայնքի ղեկավարի առաջարկությունը **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել սեփական տրանսպորտային միջոցների /ավտոբուս և միկրոավտոբուս/ վարորդներին՝ Մասիս համայնքի Այնթապ, Նոր Խարբերդ և Նոր Կյուրին բնակավայրերի աշակերտներին անվճար տեղափոխելու դպրոցներ:

2. Վարորդների հետ կնքել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր և վարձատրությունը կատարել Այնթապ բնկավայրի վարորդի համար 195000 դրամի չափով, Նոր Խարբերդ և Նոր Կյուրին բնկավայրերի վարորդների համար 155000-ական դրամի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելու հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 03-Ա/

Լսեցին
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 334-Ն ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ, 2-ՐԴ, 3-ՐԴ, 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾ 5-Ի ՀԱՄԱՁԱՅՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ՄՆԱՑՈՐԴԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ Մասիս համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 600 958 063.80 դրամը և ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 249 129 552.20 դրամը ուղղել 2024 թվականի Մասիս համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքերին համաձայն հավելված 5-ի /հատված 4 և 5/:

2. 2024 թվականի բյուջեի ֆոնդային մասի մուտքերը և ծախսերն ավելացնել 850 087 616 դրամով:

3. Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 334-Ն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածները կցվում են/:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելու հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 04-Ն/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ֆինանսական բաժնի պետի զեկույցը (զեկույցը կցվում է)՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել 2023 թվականի հոկտեմբերի 1-ից միչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառումը և բաշխումը գույքային հաշվառման փաստաթղթերում՝ համաձայն հավելված 1-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելու հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 05-Ա/

Լսեցին

ՏԱՐԲԵՐ ՄՐՑԱՇԱՐԵՐՈՒՄ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏՍՄԵՆՆԵՐԻՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՍՏՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքապետարանի աշխատակազմի ԿՍՄԵԱ բաժնի պետ Տիգրան Բաբախանյանի 26.01.2024 թվականի թիվ 2009 զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում հանգստի և սպորտի ծառայությունների գործառական դասակարգման սպորտային նպաստներ հոդվածով նախատեսված միջոցներից հատկացնել՝

Հայաստանի գինեսի ութակի ռեկորդակիր, ազատ ոճի ըմբշամարտի Երևանի չեմպիոն՝ Դավիթ Պետրոսյանին՝ 200.000 ՀՀ դրամ,

Թայլանդի թագավորությունում ուսումնամարզական հավաքներին մասնակցելու համար, մուայթայի միջազգային մրցաշարի բազմակի չեմպիոններ՝

Ռոման Սեդրակյանին՝ 600.000 ՀՀ դրամ,

Արմեն Գրիգորյանին՝ 600.000 ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելու հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 06-Ա/

Ավագանու անդամներ

ԳԱՅԱՆԵ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԱՖՐԻԿՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԲԱԲԱՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ՄԵՍՐՈՊՅԱՆ

ՄԵԼԻՔ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՆԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԵՐԵՄ ՇԱԲՈՅԱՆ

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ԶՈՀՐԱԲ ՕՍԵՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝

Վարդան Գաբրիելյանը _____

2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 01-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ
ՑՈՒՑԱԿ

2024 թվականի փետրվարի 01-ի ավագանու հերթական նիստի

Հ/Հ	Ազգանուն	Անուն	Հայրանուն	Ստորագրություն
1	Համբարձումյան	Դավիթ	Միերի	
2	Հակոբյան	Նորայր	Արեգի	
3	Եղիազարյան	Արսեն	Գագիկի	
4	Արամայիսյան	Կարեն	Գագիկի	
5	Օհանջանյան	Ելիզավետա	Գրիգորի	
6	Օսեյան	Զոհրաբ	Հայկի	
7	Կարապետյան	Կարեն	Բաբկենի	
8	Նահապետյան	Անի	Համլետի	
9	Շաբոյան	Երեմ	Մանվելի	
10	Ավանեսյան	Արթուր	Արկադիի	
11	Աֆրիկյան	Նունե	Ջանիբեկի	
12	Վարդանյան	Էդվարդ	Հրաչյայի	
13	Սարգսյան	Վարդուհի	Ռուբիկի	
14	Վանյան	Նաիրա	Մարտիկի	
15	Նազարյան	Մելիք	Դմիտրիի	
16	Մելքոնյան	Հայկ	Ներսեսի	
17	Թադևոսյան	Արման	Աշոտի	
18	Գասպարյան	Արամ	Վլադիմիրի	
19	Ասատրյան	Անուշ	Ռոլիկի	
20	Բաբայան	Գևորգ	Միշայի	
21	Խաչատրյան	Լուսինե	Գառնիկի	
22	Ոսկանյան	Էլմիրա	Համլետի	
23	Բաղալյան	Կարապետ	Նամեստի	
24	Մեսրոպյան	Կարապետ	Բագրատի	
25	Թովմասյան	Կարինե	Գևորգի	
26	Անդրեասյան	Արտակ	Մեհրաբի	
27	Ահարոնյան	Գայանե	Գեղամի	